ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___» _____ 2020 թ. N ____ Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ինՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտվելուց հետո՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարված աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
2.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	Ա. ԼԱԶԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Բախշիյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____ի
N ____- Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրով կանոնակարգվում են 2021 թվականի բերքի տակ նախատեսված Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն ծրագրի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) աշնանացան մշակաբույս (այսուհետ՝ աշնանացան մշակաբույս)՝ ցորեն, գարի և տրիտիկալե.

2) մատակարար-շահառու՝ Միջոցառման շրջանակներում աշնանացան մշակաբույսերի սերմացուների ներմուծումն իրականացրած (հնարավոր է նաև շահառուների համար) շահառու.

3) շահառու՝ Միջոցառման շրջանակներում սուբսիդավորում ստանալու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) հայտ ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

4) մատակարար՝ շահառուի պատվերով սերմեր ներմուծող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

5) Միջոցառման մասնակից՝ (այսուհետ՝ միջոցառման մասնակից) մատակարար-շահառու, շահառու.

6) ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացու (այսուհետ՝ սերմացու)՝ Արցախի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված, տնտեսական օգտակարության պետական սորտափորձարկում անցած և օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում գրանցված Արցախի Հանրապետություն ներմուծված՝ էլիտա և (կամ) առաջին վերարտադրության աշնանացան մշակաբույսերի սերմացու.

7) սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորում՝ սերմացուի արժեքի մասնակի փոխհատուցում:

II. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Նախարարությունը համակարգում և վերահսկողություն է իրականացնում Միջոցառման իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Միջոցառմանը մասնակցելու նպատակով շահառուները՝ Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջոցով սերմացուների ներմուծման դեպքում, մինչև սեպտեմբերի 10-ը դիմում են Նախարարություն՝ ներկայացնելով անհրաժեշտ սերմացուների տեսակի և քանակի վերաբերյալ տեղեկություններ:

5. Նախարարությունը սույն ծրագրի 4-րդ կետով սահմանված տեղեկությունները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ընդհանրացնում և Հիմնադրամ է ներկացնում համապատասխան տեղեկություններ՝ Հիմնադրամի միջոցով սերմացուների ներմուծումը իրականացնելու համար:

6. Հիմնադրամը սերմացուների ներմուծումն իրականացնում է Հիմնադրամում գործող կարգերին համապատասխան՝ պահպանելով սույն ծրագրի 7-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետը:

7. Սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորում ստանալու համար պարտադիր պայման է հանդիսանում Արցախի Հանրապետության տարածքում մինչև 200 հեկտար մակերեսով աշնանացան մշակաբույսերի ցանքատարածությունների մշակման նպատակով հայտի ներկայացումը, ընդ որում մասնակի սուբսիդավորման ենթակա սերմացուի քանակը 1 հեկտարի հաշվարկով չի կարող գերազանցել ցորենի դեպքում՝ 250 կիլոգրամը, գարու դեպքում՝ 160 կիլոգրամը, տրիտիկալեի դեպքում՝ 220 կիլոգրամը:

Հաշվի առնելով աշնանացան մշակաբույսերի ցանքի ագրոտեխնիկական ժամկետները մատակարար-շահառուների, մատակարարի և Հիմնադրամի միջոցով սերմացուների ներմուծումը պետք է իրականացվի մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 31-ը, իսկ միջոցառման մասնակիցների կողմից ցանքը կատարվի մինչև տվյալ տարվա նոյեմբերի 30-ը՝ սույն ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Հիմնադրամի միջոցով ներմուծված սերմացուներով՝ ներկայացված հայտով նախատեսված քանակներին համապատասխան: Սերմացուների յուրաքանչյուր խմբաքանակի համար միջոցառման մասնակիցները Նախարարություն են ներկայացնում սույն ծրագրի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

8. Մասնակի սուբսիդավորման գումարը 1 կիլոգրամ սերմացուի դիմաց կազմում է 70 ՀՀ դրամ, որը տրամադրվում է Հիմնադրամի միջոցով:

9. Սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորում ստանալու նպատակով մատակարար-շահառուն և շահառուն մինչև տվյալ տարվա նոյեմբերի 15-ը հայտ են ներկայացնում Նախարարություն՝ համապատասխանաբար համաձայն NN 1 և 2 ձևերի,

կցելով սերմացուի հավաստագրի, ներմուծումը հավաստող փաստաթղթի, որակի փորձաքննության անցկացման արդյունքների մասին համապատասխան փաստաթղթի, հայտատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենները, հողամասի (ցանքատարածություն համարվող) նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը կամ նոտարական կարգով վավերացված՝ հողամասի սեփականատիրոջ համաձայնությունը՝ հողատարածքում ցանք կատարելու վերաբերյալ:

10. Նախարարությունը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում և Հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած միջոցառման մասնակիցների ցանկը՝ նշելով սուբսիդավորման ենթակա գումարը:

11. Հիմնադրամը՝

1) սույն ծրագրի 10-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրական եզրակացություն ստացած միջոցառման մասնակիցների հետ կնքում է համապատասխան պայմանագրեր՝ նախատեսելով տասը աշխատանքային օրվա ընթացքում սուբսիդավորման ենթակա գումարի փոխանցումը միջոցառման մասնակիցներին,

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքներն իրականացնելուց հետո տասնօրյա ժամկետում Նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ:

12. Սույն ծրագրի 7-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետների ավարտից հետո մեկամսյա ժամկետում Նախարարությունը վերահսկողություն է իրականացնում միջոցառման մասնակիցների կողմից սերմացուների նպատակային օգտագործման նկատմամբ:

13. Միջոցառման մասնակիցների կողմից սերմացուների ոչ նպատակային օգտագործման դեպքում սուբսիդավորված գումարը մեկամսյա ժամկետում ենթակա է վերադարձման պետական բյուջե:

14. Նախարարությունը՝ հիմք ընդունելով սույն ծրագրի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկությունները, Հիմնադրամին է տրամադրում անհրաժեշտ ֆինանսական միջոցներ 2021 թվականի Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներից:

III. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

15. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) Արցախի Հանրապետությունում աշնանացան մշակաբույսերի բերքատվության մակարդակի բարձրացում.

2) ցանքատարածությունների ընդլայնման, բարձրարժեք սորտերի օգտագործման և ագրոտեխնիկական միջոցառումների բարելավման արդյունքում, տեղական աշնանացան մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացման համար նախադրյալների ստեղծում (ներմուծված սերմերի հաշվին 2021 թվականին նախատեսվում է ունենալ շուրջ 25000 (քսանհինգ հազար) հեկտար աշնանացան մշակաբույսերի ցանքատարածություն).

3) համալիր միջոցառումների արդյունքում երկրի ագրոպարենային համակարգում համեմատաբար կայուն իրավիճակի ձևավորում.

4) 25-30 տոկոսով աշնանացան մշակաբույսերի բերքատվության մակարդակի բարձրացում:

Ձև N 1
Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ

Դիմող_____
(ֆիզիկական կամ իրավաբանական անձ,)
Բնակության վայրը (գտնվելու վայրը), հեռախոսահամարը
_____
Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշիկամ սոցիալական քարտի համարը_____
Գործունեության իրականացման վայրը_____
Ներմուծված սերմացուի քանակը և տեսակը_____
որից_____
(սերմացուի քանակը և տեսակը, ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրային տվյալները)
_____
_____
_____
_____
_____
_____ համար
Ներկրման ժամկետները_____
Հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝
1._____
2._____
3._____
4._____
5._____
6._____
_____
_____

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝
_____
(ստորագրությունը, անունը, ազգանունը (անվանումը))

«___» _____ 20___թ.

Կ.Տ.

ՁԵՎ N 2

Արցախի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ

Դիմող_____

(ֆիզիկական կամ իրավաբանական անձ)

Բնակության վայրը (գտնվելու վայրը), հեռախոսահամարը

_____

Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշիկամ սոցիալական քարտի համարը_____

Գործունեության իրականացման վայրը_____

Ներմուծված սերմացուի քանակը և տեսակը_____

Ներմուծողը _____

(ազգանունը, անունը, հայրանունը,

_____

անձնագրային տվյալները կամ հիմնադրամը)

Ներկրման ժամկետները_____

Հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

_____

_____

_____

_____

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը (անվանումը))

«___» _____ 20__ թ.

Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ***Ա.ԼԱԶԱՐՅԱՆ***

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է աշնանացան հասկավոր հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, տրիտիկալե) բերքատվությունն ավելացնելու և տնտեսվարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ընթացիկ տարում բնակլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով Արցախի Հանրապետությունում առկա է աշնանացան մշակաբույսերի սերմացուի դեֆիցիտ:

Սույն որոշման նախագծի խնդիրն է Արցախի Հանրապետությունում հնարավորինս ունենալ էլիտա և/կամ առաջին վերարտադրության աշնանացան մշակաբույսերի սերմացու, որը հնարավորություն կտա հետագա տարիներին բարձրացնել աշնանացան հասկավոր հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի նպատակն է անբարենպաստ բնակլիմայական պայմանների պատճառով, բուսաբուծության ճյուղում ի հայտ եկած տնտեսապես բացասական հետևանքները մեղմելու համար աշնանացան հասկավոր հացահատիկային մշակաբույսերի 2021 թվականի բերքի տակ նախատեսված՝ Արցախի Հանրապետություն ներմուծված սերմերի գնի մասնակի սուբսիդավորման միջոցով՝ նպաստել ագրոտնտեսական բարձր ցուցանիշներով օժտված սերմերի հասանելիության ապահովմանը, բերքատվության բարձրացմանը, արդյունքում տեղական աշնանացան հասկավոր հացահատիկային մշակաբույսերի ծավալների ավելացմանը:

Ակնկալվող արդյունքը

Ներկայացվող որոշման նախագծից ակնկալվում է Արցախի Հանրապետությունում աշնանացան մշակաբույսերի բերքատվության մակարդակի

բարձրացում, ցանքատարածությունների ընդլայնման, բարձրարժեք սորտերի օգտագործման և ագրոտեխնիկական միջոցառումների բարելավման արդյունքում, տեղական աշնանացան մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացման համար նախադրյալների ստեղծում, համալիր միջոցառումների արդյունքում երկրի ագրոպարենային համակարգում համեմատաբար կայուն իրավիճակի ձևավորում:

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայք էջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: Նախագծի ծախսերը կնախատեսվեն 2021 թվականի պետական բյուջեով:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա. ԲԱԽՇԻՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետություն ներմուծված աշնանացան մշակաբույսերի սերմացուի արժեքի մասնակի սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ ֆինանսների նախարարություն
3. ԱՀ շրջանների վարչակազմերին
4. ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն

_____ ***Ա. Բաղալյան***
(ստորագրությունը)